ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 16/51967-Հ

«09» 09 2014 թ.

«ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ-Ի ԻՐԱՎԱԲԱՆ
ՊԱՐՈՆ ԳԵՎՈՐԳ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հայրապետյան

Երևանի քաղաքապետին ուղղված Ձեր 05.09.2014թ. Հ.14/51967 գրության վերաբերյալ հայտնում եմ, որ հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժը մայրաքաղաքի փողոցներում ապահովելու նպատակով՝ Երևանի քաղաքապետարանի 2013թ. ծրագրով և Երևան համայնքի բյուջեից հատկացված 20.0 մլն. դրամ գումարով մայրաքաղաքի փողոցներում կառուցվել են 81 հատ թեքահարթակներ /հասցեները կցվում են/:

Թվով 8 վարչական շրջանների՝ Աջափնյակ, Մալաթիա-Սեբաստիա, Նոր Նորք, Կենտրոն, Ավան, Շենգավիթ, Նորք-Մարաշ, Էրեբունի վարչական շրջանների շենքերի մուտքերի մոտ և շենքերի ներսում ևս կառուցվել են թեքահարթակներ՝ 4.3 մլն. դրամ գումարով:

Թվով 293 թեքահարթակներ են կառուցվել նաև Երևանի քաղաքապետարանի 2013թ. ծրագրով հիմնանորոգվող փողոցներում /հասցեները կցվում են/:

Առդիր՝ 4 թերթ:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ
ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԿԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝ Ս. ՄՀԵՐՅԱՆ

Կատ. Է. Շաքարյան
Հեռ. 514 – 177

S. 2014. MHERYAN. OGOSTOS